Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N04

Բյուրեղավանի համայնքի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի (այսուհետ աշխատանքային խումբ) նիստի

«25» ապրիլ 2024թ                                                                 ք. Բյուրեղավան

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի վարչական շենքի, 1-ին հարկի թիվ 2 սենյակում, մասնակցությամբ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու աշխատանքային խմբի նախագահի՝ Նորայր Շուշանյանի (Բյուրեղավան համայնքի աշխատակազմի վարչական իրավախախտումների գծով իրականացվող աշխատանքների պատասխանատու), աշխատանքային խմբի անդամներ՝ Վոլոդյա Հայրապետյանի (Բյուրեղավան համայնքի Բարեկարգում և կանաչապատում ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ), Անդրանիկ Եղիազարյանի (Բյուրեղավանի համայնքապետարանի քաղաքաշինության հողաշինության գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ) և աշխատանքային խմբի քարտուղար՝ Վարուժան Մարտիրոսյանի (Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ) քննության է առնվում հողի հարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ 21.02.2024 թվականի տեղեկանքի հիման վրա 13.03.2024 թվականին հարուցված վարույթը:

Վարչական վարույթին հարկատու՝ Նարեկ Ավետիսյանը չի ներկայացել: Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 29.1 հոդվածի 15-րդ կետով Նարեկ Ավետիսյանը համարվում է պատշաճ ծանուցված:

Քննարկվում է Բյուրեղավան համայնքում գտնվող սեփականության իրավունքով Նարեկ Ավետիսյանին պատկանող հողի՝ 81776 ՀՀ դրամ, հարկային պարտավորության հարցը՝ 62641 ապառք 19135 տույժ, ՀՀ դրամ հարկային պարտավորությունների հարցը:

Աշխատանքային հանձնաժողովը որոշեց առաջարկություն ներկայացնել համայնքի ղեկավարին ղեկավարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ

հոդվածի 1-ին մասի 24-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով, ՀՀ Հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-61-րդ հոդվածներով Մանուշակ Ղազարյանից հօգուտ Բյուրեղավան համայնքի բյուջեի գանձել 81776 ՀՀ դրամ /ապառ՝ 62641 ՀՀ դրամ, տույժ՝ 19135 ՀՀ դրամ/, որպես Բյուրեղավան համայնքում սեփականության իրավունքով նրան պատկանող անշարժ գույքի /հողամասի/ համար վճարման ենթակա հարկի գումար:

վարչական իրավախախտումների գործերը քննող աշխատանքային խմբի մասնակից անդամների հետևյալ ձայների բաշխումով՝ Կողմ 3 Դեմ 0 Ձեռնպահ 0

Հայտարարվեց որոշման գանգատարկման կարգն ու ժամկետները:

**Նախագահող՝**

Ն. Շուշանյան

**Աշխատանքային խմբի անդամներ՝**

Վ. Հայրապետյան

Ա. Եղիազարյան

**Քարտուղար՝**

Վ. Մարտիրոսյան